անխիղճ վաշխառուների անիրաւութեանց և ապօրինի գործողութեանց դէմ։ Անարդար և ապօրինի ու մութ գործերով պարապող մարդկանց կործանիչ արարքների մասին իսկոյն պիտի յայտնել տեղական իշխանութեան։ Ահա այսպիսով միայն անվերջ չարիքներից կազատուի երկրագործ Հայ և թուրք ժողովուրդը և կամաց-կամաց զարթելով իւր մահաբեր քնից, կսկսէ զարգանալ և բարգաւաճել թէ բարոյապէս և թէ նիւթապէս։ Այսպիսով միայն կարելի է դէպի առաջ ընթանալ, քաղաքակրթութեան և մտաւոր առաջադիմութեան կենսատու լուսով լուսաւորուել և նրանց բարիքները լիուլի վայելել։

Ուտիայոց աշխարհում կան մօտաւորապէս երեք հազար (3000) տուն Հայ ընտանիքներ *), որոնք գաղթել են զանազան ժամանակներում՝ Արցախի, Խոյի, Թեհրանի և Սպահանի կողմերից, որոնք խօսում են իրենց հետ բերած տեղական Հայ բարբառներով և որոնք տեղացիներից կոչւում են սարեցի Հայեր (Դաղլը Էրմանի)։ Սարեցի Հայերը ընակւում են Նուխու հարաւային կողմի լեռների, սարահարթերի և բլուրների վրայ, որոնք պարապում են բացառապէս երկրագործութեամբ և անասնարուծութեամբ։ Իսկ ուսման, կրթութեան և արուեստների դիտութեան կողմից, սարեցի Հայերը ևս իրենց հարևան Ուտիախօս և Թրքախօս Հայերի պէս գտնւում են աննախանձելի վիճակի մէջ։

*) Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան», տես երես 368։ «Աղուանից երկիր», տես երես 295։